

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) հայտարարում է նախարարությունում քաղաքացիական ծառայության հետևալ ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու մասին

## ***Ջարգացման ծրագրերի վարչության գյուղատնտեսության ծրագրավորման բաժնի գլխավոր մասնագետ (30-2.3-129)***

### ***Գլխավոր մասնագետը՝***

- իրականացնում է բուսաբուծության և անասնաբուծության ճյուղերին վերաբերող անհրաժեշտ տեղեկատվության պարբերական հավաքագրում, կատարում է հաշվարկային վերլուծություններ և մշակում առաջարկություններ.
- իրականացնում է գյուղատնտեսության ճյուղերում փոփոխության միտումներից ելնելով, հիմնական մթերքների ծավալների կանխատեսումային հաշվարկներ, ինչպես նաև մասնակցում է վարչական վիճակագրական ռեգիստրի վարման աշխատանքներին (վերջինիս վարման դեպքում).
- նախապատրաստում է բաժնի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծեր, առաջարկություններ, եզրակացություններ, այլ փաստաթղթեր, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումներ և ուղեցույցներ.
- նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր և այլ գրություններ.
- ըստ անհրաժեշտության, ներկայացնում է զեկուցումներ՝ իր կողմից սպասարկվող ոլորտին առնչվող համապատասխան մարմիններում կատարվող աշխատանքների վիճակի մասին.
- իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

### ***Նշված ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝***

- բարձրագույն կրթություն, քաղաքացիական ծառայության առաջատար պաշտոնների առնվազն 2-րդ ենթախմբում առնվազն երկու տարվա ստաժ, կամ առնվազն երեք տարվա քաղաքացիական ծառայության ստաժ և քաղաքացիական ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան, կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ կամ համայնքային ծառայության գլխավոր պաշտոնի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, կամ գիտական աստիճան և առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ վերջին տասը տարվա ընթացքում առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ մինչև 2020 թվականի հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ.

- ունի «Պարենային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարությունը և Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» 2010 թվականի նոյեմբերի 4-ի N 1476-Ն որոշման և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
- անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում.
- ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

***Աշխատավարձի չափը՝ 226,199 (երկու հարյուր քսանվեց հազար հարյուր իննսունինը) ՀՀ դրամ***

**Տվյալ ժամանակավոր թափուր պաշտոնն զբաղեցնելու ժամկետն է՝ 11.03.2019թ. (հղիության և ծննդաբերության արձակուրդ).**

***Դիմող քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝***

- գրավոր դիմում,
- անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի պատճենը,
- կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենը (պատճենները),
  - աշխատանքային գործունեության մասին վկայող փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենը (պատճենները),
  - արական սեռի անձինք նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,
  - մեկ լուսանկար 3x4 սմ չափսի:

Քաղաքացին փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն աշխատանքային օր՝ ժամը 9:30-ից մինչև 12:45-ը:

***Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 03.11.2018թ.***

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել ՀՀ գյուղատնտեսության նախարարության անձնակազմի կառավարման բաժին /ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, հեռ. 011-52-58-57/: